«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հ/կ

իրավաբան Գեւորգ Հայրապետյանին

Էջմիածնի քաղաքապետարանի լրատվության

բաժնի պետ Վարդան Վարդանյանից

Հարգելի՛ պարոն Հայրապետյան, ի պատասխան Ձեր հարցման տեղեկացնեմ, որ 2014թ. առաջին կիսամյակում Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանն ունեցել է մեկ աշխատանքային գործուղում՝ մասնակցելու Էջմիածնի քույր քաղաք ՌԴ Կարելիայի ինքնավարության մայրաքաղաք Պետրոզավոդսկի տոնի միջոցառումներին: Այցելությունը եղել է Պետրոզավոդսկի քաղաքային իշխանության պաշտոնական հրավերով, եւ բնականաբար, ծախսերի հիմնական մասն արել է հրավիրող կողմը:

Ինչ վերաբերում է Ձեր հարցման 2-րդ, 3-րդ կետերին, որոնցով պահանջում եք ներկայացնել հաշվետվություն, ապա նշեմ, որ ՀՀ օրենսդրությանը համապատասխան Էջմիածնի քաղաքապետն ամեն տարի սահմանված ժամկետում հանդես է գալիս նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությամբ: Հաշվետվության մեջ մեկ առ մեկ մատնացույց է արվում, թե ինչ աղբյուրներից, որ հոդվածներով ինչ մուտքեր է ունեցել Էջմիածին քաղաքի բյուջեն, ինչպես նաեւ՝ մանրամասն ներկայացվում է, թե ինչ ուղղություններով է ծախսվել հավաքագրված բյուջեն, որ աշխատանքների համար որքան գումար է ծախսվել: Հաշվետվությունն, ի դեպ, ներկայացվում է հրապարակային՝ 700 հոգու համար նախատեսված դահլիճում, իսկ մուտքն այդ միջոցառման ժամանակ ազատ է լինում բոլորի համար՝ Էջմիածնեցիների, հյուրերի, լրագրողների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների: Ֆինանսական մուտքերի եւ ելքերի ամբողջական հաշվետվությունն ամեն տարի սահմանված ժամկետում տեղադրվում է նաեւ Էջմիածնի քաղաքապետարանի ejmiatsin.am պաշտոնական կայքէջում:

Հարգանքներով՝ Էջմիածնի քաղաքապետարանի

լրատվության բաժնի պետ / / Վ. Վարդանյան

10. 11. 2014թ.